Մխիթար Գոշ

Առյուծը, Արջը և Գայլը

Առյուծը, արջը և գայլը ընկերանալով, ասում են.

Ինչո՞ւ լինենք հումակեր, բռնենք մի մարդ, որ իրենց սովորության համաձայն որսից մեզ համար կերակուր պատրաստի:

Եվ բռնելով մեկին, դարձրին իրենց խոհարար:

Մարդը սրտնեղելով, մտածեց ազատվելու մասին: Ճեղքելով մի մեծ փայտ, յուրաքանչյուր կողմում դրեց սեպեր, և առյուծին ու մյուսներին ասաց.

Օգնեցեք ինձ կիսելու փայտը, դրեք ձեր ձեռքերը ճեղքի մեջ և ձգեցեք:

Եվ երբ դրեցին, դուրս քաշեց սեպերը, ու գազանները մնացին բռնված: Ապա վերցնելով կացինը, սկսեց ջարդել նրանց, ասելով.

Սկսենք առյուծից: